

ցին զերծ են սա անդրադարձումներուն ժանգէն ու ժահրէն: Եւրոպական մշակոյթով սնած մեր այսպէս որակուած մտաւորականութեան անդարման դժբախտութիւնը հետեւանք է սա հոգեվիճակին: Ու դժուար է ինծի համար ձգել ու անցնիլ այդ ժանտահար պատկերները: Բայց սիւնակները համրուած են: Ու որքան ալ արհամարհես ընթերցողը, քու կարգիդ պիտի յոգնիս քրքրուած, մեր աշխարհը կանչուած այդ կպրահիւս ու գարշակուռ տարրերուն զգեսնող բեռնէն: Այսքանն ալ իբրեւ արգիլուած նիւթ: Կ'արձանագրեմ իմ ցաւը ու կը քալեմ:

Հիմա, թող այդ խեղճ մարդերը հարցնեն ինծի, իրարու բերնէ խելով բառին մասերը, բայց անծանօթով ստեղծուած սա վիճակին շեշտն ալ արժեւորելով:

- Վարժապէ՛տ, վարժապէ՛տ...

Բոլորն ալ նոյն ըոպէով, մրցումի մէջ կարծես:

Դժուար է պատասխանը: Անծանօթներուն կովկասը, մօրուքը, գիւղ ժամանող հաւանական թուրք աչքերը իմ մէջ ծնունդ կու տան վախի: Մտահոգ եմ, անշուշտ, ամէնէն առաջ սա մարդերուն ճակատագրովը, որ այս անգամ կատակ չէ: Ի զուր փնտռեցին իմ աչքերը սանկ սագի կտոր մը, քամանչայի նման բան մը, պատերէն, նըշան՝ թէ աշուղներու զոյգի մը ներկայութիւնը:

- Դուք սրանց ուսուցի՞չն էք:

Անսպասելի այս հարցումը կ'ընդհատէ մտածումներուս գնացքը:

- Այո, - կը պատասխանեմ գրեթէ նեղուած. ու չեմ ալ անդրադառնար թէ ինչու:

- Էդ լաւ: Որ էդպէս ա, ասացէք խնդրեմ...

Ստիպուեցաւ լռել սակայն: Այս ընդհատը առաջ բերողն էր զինքը բոլորող խումբին խորունկ զուարթութիւնը, երբեմն քրքիջի անգամ փոխուող: Կային, որ ձեռքերնին իրարու կը քաքսէին հաճելի կերակուրի մը, քէյֆի մը, անուշ տեսարանի մը վայելումին պատրաստուող տրամադրութեամբ: Անոնց թշուառ հագուստը եւ դէպի